Գոչեն յաւերժ և գոչեսցեն՝ զարմանազանչք վառ 'ի սէր,
Ըղձեղ մեծանձն առաքինի յասպարիզիդ երկնանուէր,
Եւ յոքնարդիւն անբաւ երկոցք ամենաշնորհ հայկաբան,
Ըստոյգ գեղեցկին սիրող ւ՚երգաբան....

Իցէ՛ւ բերկրեալք, Ամոլքդ ընտիր, յօթևանացդ երջանիկ,
Առ հայրասէր սրտիցս ուղերձ և հառաչանս անկեղծիկ,
Լիահոսան և ևս հեղջիք զանմահարալն 'ի մեզ լոյս,
Զի փըլթթեսցի միշտ այգիդ քաջաբոյս:

Հ. Գ. Ն.

ՁՄԵՌՆ

Լուռ լերուք, ով ցընծութեան այժմիկ տեսիլք այլ սըգոյ,
Բուռն հարեալ ըղձագաղից բնութեան՝ դիմեմք 'ի գերեզման:
Աւաղիկ շընչէ հիւսիս, քըստմնի դողայ երկիրս համբուն,
Եւ 'ի լերանց կուտակք ամպոց լըռինք մըթինք երեւթանան.
Մոընչեն փապարք և ծերպք 'ի վիմահատ ժայռս ափափայս
Եւ խուլ սօսափիւն վարգի 'նդ անտառս և մացառուտս:
Գաղանք ամեհիք յաղմըկալից յոյզ տարերաց
Սարսուցեալ՝ թողուն ըզգաշտ գընան զըգուեղ զիւրեանց կորիւնս.
Անյագ միայն գայլ և բորեան 'ի գիշախանձ յառ և յապուռ
Ցածին շուրջ թափառական ընդ նահապատ ծըմակս հովտաց:
Տըխրերանգ տերևք ոսինք յետին նըշխարք աշնանայնոյն՝
Վայրայած գետնաթաւալ ըզհիւղ լընուն չինականին,
կամ ըստ հողմոյն ման 'ի ման շըրջանակեալ յորձանապտոյտ՝
Մերթ ցըրուին մերթ դիզանին զերդ թըխագոյն ամպոց պատառք:
Ո՛հ, թէ 'ի թևս թռուցեալ թեթևս՝ դառնայի յետս ուստի եկի
Ի բուրաստան գարնանաղուարճ, յայգեաց 'ի ստուերս ողկուզալից,
Ուր սըփռեալ գեղածիծաղ հօրուտք մօրուտք և մանիշակ,
Անդ բազմեալ զըւարթագին երգեցի զքեզ Մանկութիւն:
Զև քամեալ զբաժակն ողջոյն՝ եղ 'ի ձեռացըս սահեցաւ,
Քան զերազ ինչ խաբուսիկ յուսադարձեալ խաղաղ 'ի քուն:
Ի զուր հառաչեցի, կեանք իմ լըցան հառաչանօք.
Երանի մանկութեան որ ոչ ծանեաւ յոգւոց հանել:
Արեգակն 'ի շառաւիղըս քօղարկեալ աղօտալոյս՝
Անկանի մօրն անդ 'ի ծոց՝ ոչ ամփեալ զտեսիլն ողորմ,

digitised by A.R.A.R.@

Զառաւօտըն մերկացեալ եղեմնապատ և սառնորակ։
Ի զօրանալ հիւսիսայնոյն բարձըր լերանց կատարք և ծայրք
Միգատարր 'ի գոյն պատին. կալաւ խաւար ըզտխեղերս.
Ցըրտանան ոլորտք այերց 'ի պաղ սարսուռ և 'ի դող,
Անհետ լինին յերկրէ կընիք գարշապարաց շրնչաւորաց։
Շինականըն պընդապինդ ըզդրունս փակէ և զպատուհանս
Արկեալ ձէթ 'ի կանթեղիկն առ խարուկին նըստի ջեռնուլ.
Եւ մանկունք շուրջ պար բոլոր՝ ըզձեռս 'ի բոցըն կարկառեալ
Ուշ 'ի շըրթունս կան հօր և մօր որ զանցելոց առնուն վիպել.
« Էր երբեմն հասակալթուա անդոց բերել ցորեան առատ,
Ցորում ամի ծընաւ Գիսակ. իսկ նա մինչդեռ 'ի թոթովս էր
Մարախ չար լափլիզեաց ըզդալարի մեր գաւառին.
Դըրացի 'ի դըրացւոյ խընդրէր յանօթ զաւուր պարէն,
Մինչև ուտել զոչխարաց հօտս և ըզգարի խառնեալ յալեր։
Էր մահագոյժ այն տարի, զի և նընջեաց մեր գեղջերէց
Գետավէժ 'ի գիշերի տարեմըտին անդ 'ի հըսկման։
Սակայն զինչ այդ ցընծութիւն զոր ընդհանուր զանչեն զանգակք —
Ճըրագալոյց է Ծընընդեան, օր աւետեաց մարդկան սեռի.
Կակղին սառամանիք և չեն արգել ինչ ումեք,
Ծաղկապըսակ զըւարճաձայն ընդ մութ երկնիւք աճապարել
Ի տօնախմբութ աւուրս հանդէս, յոր նորոգիմք և մեք 'ի Տէր.
Քան զերկիր յարփւոյն չըքնաղ՝ եկեղեցիք փայլին ջահիւք,
Եւ քան զթըռչնոց դայլայլիկ՝ սուրբ տաճարին պարք երգաբան,
Որք ընդ զուարթնոց դաշնակելով երկնից բարձանց փառաբանիչս՝
Ըզբեղ կուսդ օրհնաբանեն և զմանկացեալ Աստուածըն Բան։
Մինչ մանկիկն ըստնդիայ ըզմայրական հեգէ զանուն,
Շարժեալ զմատունս և խայտալով 'ի սէր նորին անզուգական,
Մատաղատունկն անդըրակածին գըրգուեալ 'ի ծոց իւր մայրենի
Համբուրելով խանդաղակաթ զորդեակն և աչք յարտօսր յերկինս.
« Ո՛վ Մայր, վերակարգայ, ով կուսըդ մայր Աստուածորդւոյն,
Որ զորդեկիս առեալ պատկեր՝ ընկալար զսուրբ շըրթանցդ համբոյր,
Եւ զիմ որդեակս, ահա ով Մայր, յարփենի ծոցդ հանեմ նուէր.
Ես փոխան եղէց յերկրի և դու նըմա մայր յաւիտեան »։
Զայս և յունկն անմեղ մանկանն յեղյեղելով և զայսպիսիս,
Ըստէպ յորդորս ածէ նըմա և ողջունեակս առ Մայրն երկնից։
Երանի՛, քեզ ով մանկիկ, թէ միայար այդպէս մատամբք
Առ կոյսըն ծընրադիր յաւէտ շընորհս թախանձէիր.
Բայց յո՜ւշ քեզ, ով որդեակ, զի դարանի չա՛ր նենգաւոր
Որ ըզսէր թափեալ սըրտից ցըրուէ 'ի մեղս և յընդունայնս։
Աւա՜ղ թէ մատընտու եղեալ սիրոյ Մօրդ երկնային
Քեզ յերկրի սէր խընդրեսցես 'ի յերկնայինն օձտեալ սիրոյ.
Ունկըն դիք, հընչեն զանգակք, թնդայ երկիր յարձագանգաց.

digitised by A.R.A.R.@

Ահա որ ծաղկեալ զըւարթ և 'ի մըթան անդամ պայծառ.
Սեամբ շինից և տանց համայն՝ մաշին գոգցես 'ի մուտս և յելս,
Բարեկամ առ բարեկամ անձկով մաղթէ զքեզ, Տարեմուտ,
Որ կենաց մեր գաս ըղձամս յափըշտակեալ տանել անդարձ
Ի խորս յաւիտենից, արձանագրել գըրով անջինջ։
Փութացեալ մանկունք առ ծնողըս սիրային 'ի քաղցր համբոյր՝
Ընծայիւք գրգուեալ դառնան յօրինել կայթըս գեղապար.
Եւ ծառայք զգեստաւորեալ յելս և 'ի մուտս անդ սենեկաց,
Մաղթանօք մատչին առ տեարս ակընկառոյց 'ի ձեռն առատ։
Բայց զի՞նչ ազմուկս ամբոխելոց, զի՞նչ այս դիմակք դիւաքանք
Խելայնորեալ ընդէ՞ր համբուն շրջին մարդիկ 'ի հրապարակս։—
Բարեկենդա՜ն, բարեկենդան գոչեն կըրկնեն զանգք արձանաց.
Ոչ ևս այլ արուեստաւոր 'ի փոյթ 'ի գործըն նըկըրտի,
Ոչ մանուկ ուսանող 'ի սեամս վարժիցըն դեգերեալ,
Այլ 'ի խըռան պողոտայից թափառական յածի ապուշ։
Փողոցք և անցք թընդան կառօք յերիվարացն 'ի տրոփմանէ։...
Իսկ ո՞ զայգեկութս յաջորդ ամին պատմեսցէ՝
Ցորում Արքուն Նաղենկան կարկառեաց ձեռն յեկեղեցւոյ »։
Այնգունակ այլ ևս յառաջ վարեալ ըզգըրոյց ախորժալուր
Ցիշէ և զոր լուաւ երբեմն 'ի բանըս սուրբ Երիցուն.
Ըզհասակ Գողիադայ՝ պարսաքարիւ անկեալ տապաստ,
ԶՅեփթայեայ կոյսն հայրասէր, զՅուդիթ 'ի վրանս Հողեփեռնեայ,
Ըզհաման չարեացապարտ եղեռնութեանց լուծեալ ըզվէժ,
Տուբիայ մայրն որդեգորով 'ի գլուխս անցից ճանապարհաց։
Զև 'ի քուն հանգըստեան կափուցեալ զաչս անմեղ հովուաց՝
Ի լուսանցոյցն ընդհարկանին մեղմիկ տեղեալ ձեանց հատորք.
Եւ աղօտ լոյս ճըրագին շինականին փայլեալ յերեսս,
Նըւաղի զամ քան ըզգամ մինչև փըչէ անօսըր ծուխ։
Ոչ ևս այլ աքաղաղին զըւարթ բարբառ 'ի յելս արփւոյն
Ոչ ևս այլ 'ի պատուհանըս ճաճանչեն կարմիր նըշոյլք,
Եւ զաչս արկեալ 'ի լուսամուտն ոչ տեսանէ զոր երբեմն
Սուրհանդակս արեգական ոսկեվարսամ խայտանըկար։
Անդ ծառք վարսաւորք բեղնաւորեալ սարաքատակ՝
Զգլուխս յերկիր խոնարհեալ ըստուերամած ընդ մութ երկնիւք.
Ամենայնն 'ի լըռութեան, ոչ հողմ ոչ սիգ և ոչ անձրև,
Այլ թըմբրութիւն մահահանգոյն, յոր թափառին ճըռճղուկք 'ի զուր։
Եւ առուակ վըճիտ և սուրբ մանուածապատ երբեմն 'ի սահ,
Որ տայր գեղջկին քաղցր ըմպումս և անդէոց սընունդ կենաց,
Պընդացեալ կարծրահատոր 'ի դըժընդակ սառամանեաց։
Տեսանէ տըրտմագին և զզուրս ուժգին առականեալ.
Ցակութն անդրէն իւր դառնայ վերեկորին վառել խանձողս.
Եւ ըզկըլթեալն յարջառոց դաշխուրանաւ հանեալ 'ի բոց՝

digitised by A.R.A.R.@

Պատրաստէ մանկանց ըղկեր, որք դեռ 'ի քուն նընջեն քաղցրիկ.
Երանի՜ կարգամ քեզ բիւր հովուիդ կենաց երանի,
Քան ըղվայնելըս մեծատան բազմահարուստ և բազմահօտ.
Ընդ հովանեաւ բարձըր կաղնեաց քեզ 'ի սըրտէ անձկանօք
Ի ծայրից բըլրոց լերանց երգեցի քեզ բիւր երանի.

Մինչ արփին յօթևանաց միջօրէի յարկածածուկ
Ուր ուրեմն երեւալ՝ սուրայ՞նդ ոլորտըս մեծաքայլ,
Ըսկըսանին չինից բարձունք չիթ չիթ հոսել զպաղեալ ծորանս.
Եւ 'ի փայլ մըտից նորին վերջածայրիւքն 'ի շող կարմիր
Կաթեն պէսպէս գոյն գեղեցիկ շիթք անձրևաց տանեացն 'ի քիւս.
Հասանէ փութանակի գիշեր մըթին ցըրտասաւոյց
Կերպս 'ի կերպս այլափոխեալ ըզջուր ցըրտին ձուլեալ 'ի սառն.
Է զ՚ի սուր և է յաշտէ և կամ 'ի լախտ ոլորտապատ,
Կամ ըզգետին իբր ապակեայ ծածկէ փայլուն սալայատակ.
Եւ մինչ թանգար հըսկող արթուն 'ի շուկայից սուրայ շաւիղս,
Ուշ 'ի գլուխ շրջահայի զի մի հարեալ և վէրս առցէ.
Ամենուրեք բազմաջահեան 'ի գիշերի փայլին ճըրագք,
Խումբ առ խումբ ճոխք և փարթամք այսըր անդր յածին պըճնեալք,
Կէսք 'ի թատերս այլք 'ի կաքաւըս ցայգական պահուցն 'ի սպառ.

Ե՛հ. առ այրին դարձիք թըշուառ՝ որ 'ի գըլուխ նըստեալ անցիցն՝
Ի բըքալից հողմոց անկեր արտասուաթոր կարկառէ ձեռն,
Պատառիկ մի սուկ հացի հայցել որդւոյն 'ի սփոփանս.
Կըրկին մանկունք անդ առ նըմա, մին դառնաղոչ, կիսամերկ միւսն,
Ողբալից պաղատին զօգնականս յանցաւորաց.
Ո՞ւր կաքաւել երեկորին, ո՞ւր ցընորից բարեկենդան.
Առաջի սեմոց դրանցըն գոգ դրոշմեալ թըշուառութիւն.
Այլ 'ի թըշուառ հողոյ անտի ընդ մէն հառաչս և արտասուս
Ծըլցին բողբոջք, ծըլցին ծաղիկք գունովք գեղով անթառամ.
Այսպէս յետ դառնաշունչ ձըմերայնոյն սառնամանեաց
Բազմագեղ յաջորդեսցէ գարուն գըւարճ դալարեօք.

Ահաւասիկ փըչէ հարաւ, հալին հողմունք գարնանաբերք,
Շիթ շիթ կաթեն տանեացն 'ի վայր սառինք երբեմըն կարծրակուռք.
Փըթթին բողբոջք, որթն արտասուէ, ծաղկի ծիրան և նըշենի,
Դառնայ ծիծառն, դառնան սոխակք, դառնայ սարեկն իմ մենաւոր՝
Առ երի պատուհանացս երգել ըզկեանս իմ անցաւոր.
Այսպէս ահա ամայացեալ երկիր տըխուր և անապատ
Ըզգեցաւ երագ երագ հանդերձ փառաց և ցընծութեան.
Այսպէս և հետ թըշուառութիւն անմահական սընեալ յուսով
Ծըլցի գարունս յարազըւարճ և անըսպառ բարեկենդան.

Հ. Մ. Ն.

digitised by A.R.A.R.@